

**Հարցաշար**  
**Առարկայական օլիմպիադայի «Հայոց Եկեղեցու**  
**պատմություն» առարկայի**  
**հանրապետական փուլ**  
**9-րդ դասարան - 120 րոպե**

N 1-4

**Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

**1. Ի՞նչ անուն է տալիս Երեմիա մարգարեն Երվանդունյաց Հայաստանին.**  
**(0,5 միավոր)**

- 1) Այրարատյան թագավորություն
- 2) Հայաստան
- 3) Թորգոմի տուն
- 4) Հայք

**2. Սերմնացանի առակի մեջ ի՞նչ են խորհրդանշում սերմերը.** **(0,5**  
**միավոր)**

- 1) Հիսուսի աշակերտներին
- 2) Հիսուսի հետևորդներին
- 3) Հիսուսի քարոզները
- 4) Հիսուսի աղոթքները

**3. Ո՞վ էր Պահլավունիների տոհմի վերջին կաթողիկոսը. (0,5 միավոր)**

- 1) Գրիգոր Գ Պահլավունի
- 2) Գրիգոր Զ Ապիրատ
- 3) Ներսես Ա Շնորհալի
- 4) Գրիգոր Բ Վկայասեր

**4. Ո՞ր կաթողիկոսն էր 1880-ական թվականների երկրորդ կեսին բողոք դիմումով պայքարեց**  
**հայկական դպրոցների վերաբացման համար.** **(0,5 միավոր)**

- 1) Մկրտիչ Ա Խրիմյան
- 2) Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի
- 3) Ներսես Ե Աշտարակեցի
- 4) Մակար Ա Թեղուսցի

N 5-9

**Կառուցված պատասխանով առաջադրանքներ**

**5. Կուսակրոն և ամուսնացյալ բոլոր հոգևորականները պատարագի ընթացքում ստանում են**  
\_\_\_\_\_ **օծում:** **(1 միավոր)**

6. Հիսուսի և ապա առաքյալների քարոզչության շնորհիվ քրիստոնեական առաջին համայնքները առաջացան \_\_\_\_\_ում: (1 միավոր)

7. Ս. Գրիգոր Տաթևացին կարողացավ \_\_\_\_\_ ի կաթողիկոսությունը դարձնել Ամենայն հայոց կաթողիկոսության ենթակա թեմ: (1 միավոր)

8. 1641թ.-ից Կ. Պոլսի Հայոց պատրիարքական նստավայրը \_\_\_\_\_ ի Սուրբ Աստվածածին Մայր եկեղեցին է: (1 միավոր)

9. Արմաշի դպրեվանքը արևմտահայ իրականության մեջ իր դերով համարժեք էր \_\_\_\_\_ին: (1 միավոր)

**N 10-11**

**Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից**

10. Կաթողիկոսանիստերի անունները համապատասխանեցնել իրենց գահակալման օրոք կառուցված եկեղեցիների կամ վանքերի անուններին. (1 միավոր)

- |                               |                    |
|-------------------------------|--------------------|
| 1. Սարգիս Ա Սևանցի            | ա. Կարսի Կաթողիկե  |
| 2. Անանիա Ա Մոկացի            | բ. Ս. Հռիփսիմե     |
| 3. Հովհաննես Ե Դրասխանակերտցի | գ. Նորավանք        |
| 4. Կոմիտաս Ա Աղցեցի           | դ. Աղթամարի Ս. Խաչ |
|                               | ե. Անիի Կաթողիկե   |

|   |  |
|---|--|
| 1 |  |
| 2 |  |
| 3 |  |
| 4 |  |

11. Խոսքերը համապատասխանեցնել իրենց հեղինակներին. (1 միավոր)

1. Եթե հերոսության չլիմենք, ամեն ինչ կորչելու է ի սպառ, այլևս չի լինի ո՛չ հայ, ո՛չ հայի հայրենիք:
2. Ես միշտ էլ հավատացել եմ իմ ժողովրդի ոգուն: Ես գիտեմ նրա անցած ճանապարհի դառնությունները:
3. Ժողովուրդ ամենեն առաջ քո ազատության հույսը քո վրա դիր, քո խելքին, բազկին ու ժտուր, մարդ ինքն իրմե պետք է աշխատի, որ փրկվի:
4. Պասկևիչը ահա այստեղ է կաշկանդված

|   |  |
|---|--|
| 1 |  |
| 2 |  |
| 3 |  |
| 4 |  |

- ա) Գևորգ Ե Սուրենյանց
- բ) Ներսես Աշտարակեցի
- գ) Մկրտիչ Խրիմյան
- դ) Գարեգին Հովսեփյան
- ե) Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի

**Աշխատանք սկզբնաղբյուրով կազմված 2 հարցից**

12. Հավաքվեցին վարդապետներ և եպիսկոպոսներ, վանքերի կրոնական սուրբ հայրեր և պատվական երեցներ՝ ավելի քան 300 հոգի և բազում միայնակյացներ, և ազատներ, և ազատների որդիներ, ձեռնավորներ ու տանուտերեր, և ժողովրդի անթիվ ու անհամար բազմություն:

1. Ո՞ր կաթողիկոսի ընտրության համար էին հավաքվել: (1միավոր)

2. Ո՞ր աշխատությունից է մեջբերումը: (1միավոր)

13. Իմ հոտը Թուրքիայում, մանավանդ բնիկ հայկական գավառներում, աննախընթաց տառապանքների մեջ է: Ընդդեմ Փոքր Ասիայի հայ բնակչության ստեղծված է խաղաղ ոչնչացման մինչև այժմ չտեսնված մի համակարգ:

1. Ո՞վ է այս տողերի հեղինակը: (1միավոր)

2. Ու՞մ է ուղղված: (1միավոր)

**Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն պահանջող առաջադրանք:**

14.1. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞ր քաղաքն է ավելորդ: (0,5միավոր)

Ստամբուլ, Անթիլիաս, Սիս, Երուսաղեմ:

14.2. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞րն է ավելորդ (0,5միավոր)

Ապաշխարություն, ձեռնադրություն, ամուսնություն, խոստովանություն:

15.1. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված. (1միավոր)

ա. Գյումրու Յոթվերք Ս.Աստվածածին, Վանաձորի Ս. Գրիգոր Նարեկացի, Աշտարակի Ս.Աստվածածին

բ. Գորիսի Ս. Գրիգոր Լուսավորիչ, Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ, Եղեգնաձորի Ս.Աստվածածին

գ. Բամբակաշատի Ս.Աստվածածին, Գավառի Ս.Աստվածածին, Իջևանի Ս. Ներսես Շնորհալի

---

---

**15.2. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված. (1 միավոր)**

- ա. Մովսես Խորենացի, Ղազար Փարպեցի, Ագաթանգեղոս
  - բ. Մովսես Խորենացի, Ղազար Փարպեցի, Վահան Գողթնեցի
  - գ. Ղազար Փարպեցի, Ագաթանգեղոս, Սահակ Պարթև
- 
- 

**16. Բերված մտքերից ո՞ր երկուսը Գևորգ Ե կաթողիկոսի կոչից չեն.**

(1 X 2 = 2 միավոր)

- 1) Դարեր շարունակ հայոց ազգն այսպես է ապրել՝ իր ինքնության համար պայքարելով, իր վաղվա համար այսօր մեռնելով:
- 2) Հայ ժողովուրդն օրհասական կռիվներ շատ է ունեցել և միշտ ելք է գտել ու փրկել իրեն:
- 3) Մեր պատմության անցյալ դարերը լիքն են քաջության օրինակներով, ներկված են նահատակների արյամբ:
- 4) Հայրենիք ստեղծելը հերոսություն է, հայրենիք շենացնելը՝ առաքինություն:
- 5) Միթե՞ մենք չպիտի կարողանանք պահպանել մեր օջախի կրակը, մեր հավատի ջահը, մեր ազգային գոհի հիմքերը:

|  |
|--|
|  |
|  |

**17. Շարադրանք (2 միավոր)**

Ազգային ազատագրական պայքարի վերելքն ու Հայոց եկեղեցին 1988-1994 թթ.: